ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N2673 - Ա **16 ապրիլի 2009թ.**

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 1-Ի Հ. 3541-Ա, ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 22-Ի Հ. 4228-Ա, ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26-Ի Հ. 4346-Ա, ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի Հ. 4945-Ա, ՆՈՅԵՄԲԵՐԻ 28-Ի Հ. 5567-Ա, ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 4-Ի Հ. 5688-Ա, ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի Հ. 5992-Ա, ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի Հ. 6117-Ա, 2009 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 4-Ի Հ. 576-Ա, ՓԵՏՐՎԱՐԻ 5-Ի Հ. 611-Ա, ՄԱՐՏԻ 2-Ի Հ. 1190-Ա, ՄԱՐՏԻ 23-Ի Հ. 1601-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 05.03.2009թ. հ.20-Ել-1515, 18.03.2009թ. հ.20-Ել-1896ա, 23.03.2009թ. հ.20-Ել-2169, 30.03.2009թ. հ.20-Ել-2433, 01.04.2009թ. հ.հ.20-Ել-2589, 2670 գրությունները, քաղաքացիների դիմումները.

1. Երևանի քաղաքապետի 2008 թվականի օգոստոսի 1-ի «Կենտրոն համայնքի Նորագյուղ հ.169/1 բնակելի տան նկատմամբ Սուրիկ, Սիրանուշ Ղազարյանների և Լալա Թովմասյանի գույքային իրավունքները վերականգնելու մասին» հ.3541-Ա որոշման 1-ին կետում «154.21» թիվը փոխարինել «75.9» թվով, «շենք-շինությունների» բառերից հետո «և Էդվարդ, Հրաչյա, Արմեն, Տիգրան Ազարյանների, Աննա Ավշարյանի» բառերը փոխարինել «(որից 31.2քմ մակերեսով հողամասն ընհանուր համատեղ սեփականություն է Էդուարդ Ազարյանի հետ)» բառերով:

2. Երևանի քաղաքապետի 2008 թվականի սեպտեմբերի 22-ի «Տ. Մեծի պողոտայի 1-ին նրբանցքի հ.27 բնակելի տան նկատմամբ Ռոբերտ, Մարինե Գևորգ, Աշոտ Մկրտչյանների, Սուսաննա Հովհաննիսյանի, Սոնա Մկրտիչյանի և Արսեն, Մանվել Հայրապետյանների գույքային իրավունքները վերականգնելու մասին» հ.4228-Ա որոշման 1-ին կետում «34.84» թիվը փոխարինել «72.12» թվով, «և դրա» բառերից առաջ լրացնել «(որից 9.63քմ մակերեսով հողամասն ընդհանուր համատեղ սեփականություն է Վեներա Ավետիսյանի հետ)» բառերը:

3. Երևանի քաղաքապետի 2008 թվականի սեպտեմբերի 26-ի «Օստրովսկու փողոցի հ.60/1 բնակելի տան նկատմամբ Ռազմիկ, Գևորգ, Քնարիկ Կարապետյանների և Սեդա Վարդանյանի գույքային իրավունքները վերականգնելու մասին» հ.4346-Ա որոշման 1-ին կետում «Ռազմիկ» անունից հետո լրացնել «Գվիդոնի» անունը, «Գևորգ» անունից հետո լրացնել «Ռազմիկի» անունը, «Քնարիկ» անունից հետո լրացնել «Ռազմիկի» անունը, «Սեդա» անունից հետո լրացնել «Գուրգենի» անունը, իսկ «Վարդանյանի» ազգանունից հետո լրացնել «(համապատասխանաբար ծնված՝ 10.07.1950թ., 09.06.1974թ., 19.10.1981թ., 08.03.1957թ.)» բառերը և թվերը:

4. Երևանի քաղաքապետի 2008 թվականի հոկտեմբերի 28-ի «Բրյուսովի փողոցի հ.11/12 բնակելի տան նկատմամբ Սամսոն Սամսոնի Դանիելյանի, Անուշ Յուրիկի Դանիելյանի, Արամ

Հայրապետի Դանիելյանի, Լենա Սմբատի Դովլաթյանի, Հայրապետ Սամսոնի Դանիելյանի, Էլմիրա Հրայրի Դանիելյանի, Արսեն Հայրապետի Դանիելյանի, Արմեն Արթուրի Դանիելյանի, Նարինե Սամսոնի Դանիելյանի, Արթուր Սամսոնի Դանիելյանի գույքային իրավունքները վերականգնելու մասին» հ.4945-Ա որոշման վերնագրում, 1-ին և 5-րդ կետերում «Արամ» անունը փոխարինել «Արման» անվամբ:

5. Երևանի քաղաքապետի 2008 թվականի նոյեմբերի 28-ի «Գյուլբեկյան փողոցի հ.40/5 բնակելի տանը կից հողամասի նկատմամբ Խաչիկ Աթաբեկի Իվանյանի, Էմմա Գվիդոնի Մելքոնյանի գույքային իրավունքները վերականգնելու մասին» հ.5567-Ա որոշման վերնագրում,

4-րդ կետում լրացնել «Մարիամ Պողոսի Ասատրյանի, Անահիտ Համբարձումի Ասատրյանի, Արտյոմ Համբարձումի Ասատրյանի» անունները, իսկ 1-ին կետում լրացնել «Մարիամ Պողոսի Ասատրյանի (07.08.1937թ.), Անահիտ Համբարձումի Ասատրյանի (08.08.1965թ.), Արտյոմ Համբարձումի Ասատրյանի (12.09.1972թ.)» անունները և թվերը:

6. Երևանի քաղաքապետի 2008 թվականի դեկտեմբերի 4-ի «Աճեմյան փողոցի 2-րդ փակուղու հ.67 հասցեի բնակելի տան նկատմամբ Վազիր Մաջիթի Ռաշոևի գույքային իրավունքները վերականգնելու մասին» հ.5688-Ա որոշման 1-ին կետում «97.9» թիվը փոխարինել «100.1» թվով:

7. Երևանի քաղաքապետի 2008 թվականի դեկտեմբերի 15-ի «Շահամիրյանների փողոցի հ.20/24 բնակելի տան նկատմամբ Ջուլետա Բաբկենի Գևորգյանի գույքային իրավունքները վերականգնելու, 323.13քմ մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» հ.5992-Ա որոշման 2-րդ կետում «5-րդ» թիվը փոխարինել «7-րդ» թվով:

8. Երևանի քաղաքապետի 2008 թվականի դեկտեմբերի 19-ի «Այգեստանի 2-րդ փողոցի հ.17 հասցեի բնակելի տանը կից հողամասի և շենք-շինությունների նկատմամբ Իրա Գեղամի Հովհաննիսյանի գույքային իրավունքները վերականգնելու մասին» հ.5567-Ա որոշման վերնագրում, 1-ին և 4-րդ կետերում «Հովհաննիսյանի» ազգանունից հետո լրացնել «Աիդա Արմենակի Հովհաննիսյանի, Լյուդմիլա Ալեքսեյի Հովհաննիսյանի, Վիոլետա Ռոբերտի Հովհաննիսյանի» անունները, իսկ նախաբանի առաջին պարբերությունում՝ «Աիդա Արմենակի Հովհաննիսյանի (04.06.1939թ.), Լյուդմիլա Ալեքսեյի Հովհաննիսյանի (23.02.1941թ.), Վիոլետա Ռոբերտի Հովհաննիսյանի (07.07.1969թ.)» անունները և թվերը :

9. Երևանի քաղաքապետի 2009 թվականի փետրվարի 4-ի «Նորքի 11-րդ փողոցի հ.2 հասցեի բնակելի տանը կից հողամասի և շենք-շինությունների նկատմամբ Նորայր Վարդգեսի Մարտիրոսյանի գույքային իրավունքները վերականգնելու մասին» հ.576-Ա որոշման նախաբանի առաջին պարբերությունում և 1-ին կետում «383.06» թիվը փոխարինել «398.49» թվով, «112.41» թիվը փոխարինել «127.81» թվով:

10. Երևանի քաղաքապետի 2009 թվականի փետրվարի 5-ի «Նորքի 1-ին նրբանցքի հ.15 բնակելի տանը կից հողամասի և շենք-շինությունների նկատմամբ Նորիկ Հակոբի Հակոբյանի գույքային իրավունքները վերականգնելու, 149.39քմ մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» հ.611-Ա որոշման.

1) վերնագրից հանել «149.39քմ մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու» բառերը.

2) նախաբան նախաբանի առաջին պարբերությունում «702.26» թիվը փոխարինել «547.97» թվով, երկրորդ նախադասությունը խմբագրել հետևյալ բովանդակությամբ. «Օրինական հողամասին կից օգտագործվող 293.1քմ մակերեսով հողամասն օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:».

3) 1-ին կետում «300» թիվը փոխարինել «293.1» թվով, «449.39» թիվը փոխարինել «դրա» բառով.

4) չեղյալ ճանաչել 2-րդ, 3-րդ և 7-րդ կետերը։

11. Երևանի քաղաքապետի 2009 թվականի մարտի 2-ի «Սևանի փողոցի հ.34 բնակելի տան նկատմամբ Գուրգեն Սմբատի Գեղամյանի գույքային իրավունքները վերականգնելու մասին» հ.1190-Ա որոշման վերնագրում, 1-ին և 5-րդ կետերում կետում «Գուրգեն Սմբատի Գեղամյան» անունը փոխարինել «Անժիկ Հարությունի Գեղամյան» անվամբ, իսկ նախաբանի առաջին պարբերությունում «Անժիկ Հարությունի Գեղամյան (20.09.1935թ)» անվամբ և թվերով ։

12. Երևանի քաղաքապետի 2009 թվականի մարտի 23-ի «Տիգրան Մեծի պողոտայի 1-ին նրբանցքի հ.11/3 բնակելի տան նկատմամբ Հենրիկ Հաբեթի Աբովյանի գույքային իրավունքները վերականգնելու մասին» հ.1601-Ա որոշման վերնագրում, նախաբանում, 1-ին և 4-րդ կետերում «պողոտայի» բառից հետո հանել «1-ին» թիվը։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ